սարակութիւնից, որ վայելել է և դեռ երկար ժամանակ կը վայելի նրա բազմակողմանի գործունէութեան արգասիքները։

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Правительственный Вѣстникъ» լրագրում տպուած է. Այն անձանց մեծամասնութիւնը, որոնք յանցաւոր էին փետրուարի 9-ին և 17-ին անկարգութիւններ նախապատրաստելու և մասնակցելու մէջ, Բարձրագոյն հրամանով բանտարկութեան են թարկուելու, և այդ բանի համար նշանակուած էր Արխանգելսկի բանտը։ Մինչև Արխանգելսկ ուղարկելը բռնուածները մնում են Մոսկուայի բանտերից մէկում, և նրանց ընթացքը, որ արտայայտուում է նրանով, որ նրանք անկարգութիւններ են անում, չեն ենթարկուում բանտային կանոններին և կարգապահութիւնը խախտում են, այն հզրակացութեան է բերում, որ համեմատաբար երկար ժամանակով այդքան անձանց կուտակումը մէկ բանտում կարող է չափազանց ոչ ցանկալի հետևանքներ ունենալ, որոնք, նոյնպէս, կարող են անհրաժեշտ դարձնել արտակարգ միջոցներին դիմելը։ Թէ այդ պատճառով և թէ պահպանելու համար ընկերների հնարաւոր վատ ազդեցութիւնից առանձին կալանաւորներին և առհասարակ բանտային կարգը, Թագաւոր Կայսրը բարեհաճեց հրամայել, որ նախկին ենթադրութիւնը՝ բանտարկութեան դատապարտուած վերոյիշեալ անձանց Արխանգելսկի բանտում կենտրոնացնելու մասին փոխել և բաժան-բաժան տեղաւորել նրանց, պատիժը կրելու համար, փոքրաթիւ խմբերով Կայսրութեան զանազան բանտերում։

Ապրիլի 2-ին, ցերեկուայ մօտ 2 ժամին, երբ ներքին գործերի մինիստրը մտնում էր մինիստրների կոմիտէի չինութիւնը Մարիինսկի Պալատում, դրանից մի քանի րոպէ առաջ կառքով եկած և դռնապանի սենեակում մինիստրին սպասող անյայտ մարդը, զինուորական օֆիցէրական համազգեստով, մատուցանելով հնքած ծրար, չորս անգամ բէվօլվէրը արձակեց մինիստրի վրայ, այնպէս որ երկու գնդակով ծանր վիրաւորեց եգերմէյստէր Սիպեագինին։ Վիրաւորուածին, Մաքսիմիլիանովսկայա բուժարանը տեղափոխելուց յետոյ, բժշկական օգնութիւն հասցրին բժշկապետներ Վլեեամինով և Տրոյանով, բայց չը նայելով դրան, եգերմէյստէր Սիպեագին մէկ ժամից յետոյ վախճանուեց։ Ստուգուած է, որ բռնուած յանցաւորը, զինուորական չը լի-

նելով, հագել էր ադիւտանտի համազգեստ, որպէս զի դիւրութիւն ունենայ մինիստրին մօտենալու։

—

Պետական քարտուղար, մինիստր, Ցինլանդական Մեծ Իշխանութեան ստատս-սեկրետար, սենատոր, ներգործական ներքին խորհրդական Ֆօն-Պլեվէ նշանակուած է ներքին գործերի մինիստր, թողնուելով ստատս-սեկրետարի և սենատորի կոչումների մէջ։

—

Ներքին գործերի մինիստրը, պետական կարգը և հասարակական հանգստութիւնը պաշտպանելու համար միջոցների Բարձրագոյն հաստատուած կանոնադրութեան 17-ն յօդուածի 1-ին կէտի հիման վրայ, անհրաժեշտ համարեց ներկայ ապրիլի 2-ին ներքին գործերի նախկին մինիստր եգերմէյստէր Սիպեագինի սպանութեան գործը յանձնել զինուորական դատարանի քննութեանը, գործադրելով պատերազմական ժամանակուայ օրէնքները։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստր ինֆանտէրիայի գեներալ Վաննօվսկի արձակուած է, իր խնդիրքի համաձայն, խանգարուած առողջութեան պատճառով, ժողովրդական լուսաւորութեան մինիստրի պաշտօնից, թողնելով նրան գեներալ-ադիւտանտ և Պետական Խորհրդի անդամի կոչումը։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի օգնական սենատոր գաղտնի խորհրդական Մէչչանինով արձակուած է, իր խնդիրքի համաձայն, մինիստրի օգնականի պաշտօնից, թողնելով նրան սենատորի կոչումը։—Ժողովրդական լուսաւորութեան մինիստրի օգնական իսկական պետական խորհրդական Զէնգէր նշանակուում է ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կառավարիչ։

«Правительственный Вѣстникъ» լրագրում հրատարակուած է հետևեալ Բարձրագոյն րեսկրիպտը ինֆանտէրիայի գեներալ Վաննօվսկու անուան. «Պետր Սեմիոնովիչ, կանչելով ձեզ ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը կառավարելու համար, ես ղեկավարուում էի այն համոզմունքով, որ այն փորձը և հմտութիւնը պատասխանատուութեան դաստիարակութեան ասպարէզում, որ մանում էր ձեր զինուորական և պետական բազմամեայ գործունէութեան չրջանում, կ'օգնեն ձեզ իրագործելու Իմ ձեզ վստահացած դիտաւորութիւնը։ Այժմ, սաստիկ աչխատանքներից խանգարուած առողջութեան պատճառով դուք դիմելիք ինձ խնդրելով արձակել ձեզ Իմ ձեզ յանձ-

նած պաշտօնից՝ ցաւակցութեամբ ղիջանելով ձեր խնդիրքին և արձակելով ձեզ ժողովրդական լուսաւորութեան մինիստրի պաշտօնից, պահպանելով ձեր մնացած պաշտօնները և կոչումը։ Ես մի և նոյն ժամանակ յայտնում եմ ձեզ իմ անկեղծ չնորհակալութիւնը Ձեր դէպի Ինձ ունեցած հաւատարմութեան համար, որ ղրկից ձեզ, չը նայելով ձեր ծեր հասակին, յանձն առնել մի այդքան դժուար գործունէութիւն։ Մնում եմ դէպի ձեզ միշտ բարեհաճ՝ Իսկականի վրայ Նորին Կայսերական Մեծութեան ձեռքով գրուած է. «Ի ձեզ խորին կերպով յարգող

ՆԻԿՕԼԱՅ»։

—

«Кавказъ» լրագիրը հաղորդում է, թէ «Ապրիլի 21-ին, առաւօտեան 11 ժամին, Բագուում, հայոց եկեղեցու մօտ գտնուող հրապարակի վրայ, հաւաքուեց մի քանի հարիւր մարդուց բաղկացած ժողովրդի խուռն բազմութիւն։ Ամբոխը բարձրացրեց կարմիր դրօշակ, սկսեց աղմուկ հանել և այս ու այն կողմը նետել յեղափոխական բովանդակութիւն ունեցող թերթիկներ։ Ոստիկանութեան կողմից ձեռք առնուած միջոցներով և կօզակների աջակցութեամբ կարգը վերահաստատուեց։ Բռնութիւններ տեղի չունեցան։ Ձերբակալուած են երկու հոգի»։

—

Մինիստրութեան պաշտօնեաներին ընդունելով, ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան կառավարիչ Զէնգէր արտասանեց մի երկար ճառ։ Սկզբում մատնացոյց անելով աշխատանքի ընթացքի վրայ իր նախորդների ժամանակ, մինիստրութեան կառավարիչը նկատեց, որ միջնակարգ դպրոցը վերակազմելու վերաբերեալ բոլոր նախագծերը, բարձրագոյն հրամանով, կ'ենթարկուեն ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան գիտնական կոմիտէի և խորհրդի քննութեանը, որոնց մօտ կ'ուղարկուեն նոյնպէս և եղրակացութիւն միջնակարգ դպրոցների մանկավարժական խորհուրդների և հոգաբարձական խորհուրդների կարծիքները այս տարուայ կատարուած փորձի հետևանքների մասին. 1901 թուի յունիսի 11-ի Բարձրագոյն հրամանի գործողութեան ժամանակամիջոցի չարունակութիւնը եկող տարուայ համար անխուսափելի է դառնում, նրա ժամանակաւոր կազմութիւնը պէտք է իրագործուի առանց նախավճռելու միջնակարգ դպրոցի բէֆորմի հետևանքները։ Բարձրագոյն հրամանի համաձայն, կազմուում է յանձնաժողով իւրաքանչիւր չրջանի գիմնազիայի դիրեկտօրից և բէալական դպրոցի դիրեկտօրից՝ այդ առարկայի վերաբերմամբ ա-

մինից աւելի նպատակայարմար ձեռնարկութիւնները քննելու համար։ Ցանձնաժողովի ենթադրութիւնները նոյնպէս կ'ենթարկուեն դիտնական կոմիտէի և մինիստրի խորհրդի քննութեանը, որովհետև անհնարին է առաջարկել նրանց Պետական խորհրդի հաստատութեանը, այն հաշուով, որ նրանք կարողանան իրագործուել եկող տարուայ սկզբից։ Այդ ենթադրութիւնները կ'ենթարկուեն Բարձրագոյն բարեհայեցողութեանը։ Վերջում մինիստրութեան կառավարիչը յոյս յայտնեց, որ անաչառութեամբ կը քննուեն նշանաւոր հարցերը, այն պայմանով, որ յարգուեն ուրիշների կարծիքները։ Մատնացոյց անելով մինիստրութեան հոգածութեան վրայ՝ բարձր արդիւնաբերական և սկզբնական կրթութիւնը զարգացնելու մասին և անդադար աշխատելու անհրաժեշտութեան վրայ այդ չրջաններում, Ջէնգէր աւարտեց իր ճառը հետևեալ խօսքերով. «Թող պահպանէ մեզ Աստուած մեծամտութիւնից և միակողմանիութիւնից, թող պահպանէ Նա մեզ աղմկալի խրոխտութեան և թեթևամտութեան հաճոյանալուց։ Մեր գործն է հանգիստ և առանց փոքրոգութեան յայտնել հաստուն մտածուած համոզմունք խղճով ըստ մեր ձեռնհասութեան. Տէր Աստուածը—Աղբիւր ամեն իմաստութեան և Դաստաւոր մեր խճդի—թող օգնէ մեզ հասնելու այն նպատակին, որը մատնացոյց է անում մեզ՝ ամենքիս համար միատեսակ սիրոյ վրայ դէպի լուսաւորութիւնը, հայրենիքը և մեր Թագաւորը»։

—

Վերջին ժամանակներս Պոլտավայի եւ Խարկովի նահանգներում տեղի ունեցան հասարակական կարգի լուրջ խախտումներ։ Տեղի ունեցած դէպքերի էութիւնը հետեւեալն է։ Անցեալ մարտ ամսի մօտ կէսին Պոլտավայի գաւառին հարեւան Կօնստանտինօգրադի գաւառամասում, Պոլտավայի նահանգում, կալուածատիրոջ ագարակն սկսեցին գալ համախմբուած հարեւան գիւղացիները եւ, պատճառ բերելով, որ ուտեստի պաշարի պակասութիւն ունեն, խնդրում էին տալ իրանց ձրի հաց եւ անասունների համար ուտելիք. միևնոյն ժամանակ նոյն տեղում սկսեց աճել ցորենի, գետնախնձորի եւ խոտի գողութիւնների քանակութիւնը։ Շուտով գիւղացիները խնդիրքից անցան դէպի պահանջներ, որոնք ուղեկցվում էին հետեւեալ բացականչութիւններով. «Մի եւ նոյն է, չուտով բոլորը մերը կը լինի», ապա սպառնալիքներին, որ մերժման դէպքում բոլորը ուժով կը վերցնեն։ Այդ բոլոր երեւոյթները նկատւում էին համեմատաբար փոքր տարածութեան վրայ, Կօնստանտինօգրադի գաւառի Մակեիւկա, Վարվարօվկա, Ֆէդօրօվկա և Լիսիչէ գիւղերի մօտ եղած ագարակների չրջանում, որոնցից վերջինը, ինչպէս երեւում է,

յանցաւոր պրօպագանդայով պարապող անձերից մի քանիսի ապրելու տեղն էր։ Ծուզմունքը ազգաբնակութեան մէջ աստիճանաբար սաստկանում էր եւ վերջապէս, մարտի 28-ին, Մակինտօվկա գիւղի գիւղացիների եւ մասամբ հարեւան գիւղերի բնակիչների մեծ ամբոխ եկաւ սայլերով Նորին Բարձրութիւն Դուքս Մէկկլէնբուրգ Ստրէլիցկու կալուածքի «Կարլօվկա» խուտօրներից մէկը ապառնալիքներով, խլեց կառավարչից ամբարների բանալիները, դուրս տարաւ մի քանի հազար պուդ գետնախնձոր, եւ դրա հետ միասին Պոլտավայի եւ Կիեւատանտինօգրադի գաւառներում սկսուեցին ակնյայտնի անկարգութիւններ. գիւղացիները, աչկարայ, ամբողջ սայլախմբերով, բաղկացած երբեմն մինչեւ երեք-չորս հարիւր սայլերից, յարձակւում էին կալուածատէրերի եւ հարուստ կազակների ագարակների վրայ, կոտրում էին մառանների, սարայների եւ ներքնատների կողպէքները եւ տանում էին ցորեն և անասունների ուտելիք ու գիւղատնտեսական գործիքներ, երբեմն էլ քշում էին տաւարը։ Մի քանի դէպքերում կողոպտիչների այդ խմբում լսւում էին հետեւեալ աղաղակները. «Վերցրէք, դուք պէտք է այնպէս վարուէք, ինչպէս գրքում է գրուած, այդ բոլորը մերն է»։—Մարտի 30-ին Պոլտավայի նահանգապետը, անհրաժեշտ համարելով հանգստութիւնը վերականգնելու համար արտակարգ միջոցներ ձեռք առնել, հետեւեալ զօրքի երեք բատալիօններով գնաց անկարգութիւնների տեղը եւ 31-ին սկսեց նրանց դադարեցնելու գործը, կողոպտիչների հետքերով գնալով։ Զօրքերի երեւալը, պատշաճաւոր տպաւորութիւն թողնելով այն գիւղերում, որոնց այդ զօրքերը գրաւել էին, չէր կարող միանգամից վերականգնել կարգը մնացած տեղերում. եւ Պոլտավայի նահանգի երկու գաւառներում եւս կողոպտումները չարունակւում էին եւ մարտի 31-ին ուրիշների թւում Կիեւատանտինօգրադի գաւառում կողոպտուեց վաճառական Վօլիկի խոշոր ագարակը, որտեղից տարան մօտ 20,000 պուդ ցորեն։ Ապստամբութիւնը սկսուեց մօտենալ Պոլտավային։ Ապրիլի 1-ին գիւղացիների ամբոխը յարձակումն գործեց կալուածատէր Տրէպկէի քաղաքից տասը վերստ հեռու գտնուող ջրաղացը Կօվալէվկա գիւղի մօտ։ Պոլտավայի փոխ-նահանգապետի հրամանով այնտեղ ուղարկուած հետեւակ զօրքի երկու պէլոտոնները եկան այդ տեղը արդէն այն ժամանակ, երբ գիւղացիները արդէն վերադառնում էին Տրէպկէի կալուածքից՝ կողոպուտ անելուց յետոյ։ Չէմսկի հրամանատարը, որ ուղեկցում էր զօրքին, կանգնեցրեց բանակը եւ սկսեց քննութիւն կատարել. այդ ժամանակ ձողերով եւ եղաններով զինաւորուած ամբոխը սկսեց յարձակուել եւ հրամանատար չտաբ-օֆիցէրի նախադրութեանը այն բանի մաս-

ին, թէ ինքն ստիպուած կը լինի հրացաններ արձակել, պատասխանեցին քարերով եւ ծաղրով։ Դրանից յետոյ ամբոխի վրայ հրացաններ դատարկուեցին, որոնցից երկու կողոպտիչներ սպանուեցին եւ եօթը վիրաւորուեցին. վիրաւորուածներից մէկը մեռաւ. հետագծների վէրքերը վտանգաւոր չէին։ Ապրիլի 2-ին անկարգութիւնները կօնստանտինօգրադի գաւառում, չնորհիւ զօրքերի անցուդարձի, որ զօրեղացրած էին կրկին Պոլտաւայից ուղարկուած չորրորդ բատալիօնով, սկսեցին խաղաղվել, թէպէտ եւ մի քանի ագարակներ հէնց Պոլտաւայի մօտ էլի կողոպտուեցին։ Ապրիլի 3-ին խռովութիւնների նոր բռնկումն տեղի ունեցաւ կօնստանտինօգրադի գաւառում, որը ընթացք չունեցաւ եւ ապա անկարգութիւններ Պոլտաւայի նահանգում վերջնականապէս դադարեցրուեցին։ Ընդամէնը այդ նահանգում կողոպտուեցին 54 ագարակներ։ Մարտի 31-ին խռովութիւններն անցան Խարկովի նահանգը, բռնելով Վալկովսկի գաւառը եւ Բօգոդուխովի գաւառի աննշան մասը։ Երեք օրվայ զարգացումից յետոյ Պոլտաւայի նահանգում, անցնելով Խարկովի նահանգը, անկարգութիւնները այստեղ երեւան եկան աւելի սանձարձակ ձեւով. գիւղացիները արդէն չէին բաւականանում ցորեն, գետնախնձոր եւ խոտ յափշտակելով, այլ կողոպտում էին ինվենտարը, քչում էին տաւարը, երբեմն տանում էին ընտանեկան սարք ու կարգը. ասէին մի քանի ագարակներ եւ նրանցից երկուսը այրեցին։ Վալկիի գաւառում կողոպտիչների երեւալու մասին զեկուցումներ ստացաւ Խարկովի նահանգապետ իշխան Օբօլէնսկի, որը դրանից մի փոքր առաջ ստանձնել էր նահանգի կառավարութիւնը, երեկոյեան մարտի 31-ին։ Նոյն գիշերը եւ երէ նա ճանապարհ ընկաւ դէպի անկարգութիւնների տեղը, վերցնելով իր հետ հետեւակ գնդի մի բատալիօն եւ հարիւր կօզակներ։ Ապրիլի 1-ին, առաւօտեան, զօրքերը վրայ հասան կողոպտիչներին ինֆանտէրիայի գեներալ Պէրլիկի կալուածքում, խլեցին նրանցից կողոպտուած գոյքը, պատժեցին մեղաւորներին եւ ձերբակալեցին մօտ 20 մարդիկ. ապա կողոպտելու ժամանակ բռնելով գիւղացիներին Պոլտաւայի նահանգի երկու հարեւան ագարակներում, իշխան Օբօլենսկի իմացաւ, որ կողոպտում է վաճառական Մօլդավսկու մեծ չաքարագործարանը Վալկի գաւառի Նովօ-Իվանօվսկ գիւղում, բայց կարողացաւ զօրքերով գալ միայն այն ժամանակ, երբ յարձակումը վերջացել էր։ Այդ գործարանից յափշտակված է մինչեւ 30,000 պուդ չաքար եւ ամէն տեսակ սարք ու կարգ, մասամբ քանդված եւ տարուած են մեքենաները եւ քչել տարել են 150 զոյգ եղներ։ Ամբոխն այստեղ հասաւ այնպիսի կատաղութեան, որ յարձակվեց գործարանական հիւանդանոցի վրայ, յափշտակեց

բոլոր դեղերը դեղատներից և հիւանդների տակից դուրս էր քաշում ու տանում էր դօշակները։ Այդ ժամանակ հասաւ Նահանգապետը մի փոքրիկ բուռ կօզակների հետ եւ ձերբակալեց կողոպտողների մի նշանաւոր քանակութիւն ու ենթարկելով նրանց պատժի՝ վերականգնեց կարգը։ Թէեւ ապրիլի 1 ին եւ 2-ին զանազան տեղերում Խարկօվից ուղարկած օգնական զօրքերը ժամանակին վրայ հասան եւ կանգնեցրին յարձակումների մեծ մասը, բայց եւ այնպէս ամեն տեղ չէր աջողւում կողոպտումների առաջն առնել։ Ամսի 1-ին ամբոխը կողոպտեց կալուածատիրուհի Գաեվսկայայի կալուածքը եւ կրակ տուեց նրա շինութիւններին։ Նոյն օրը յարձակման ենթարկվեց Կանտակուզովկա հարուստ կալուածատիրական ագարակը. նրա մէջ կողոպտուած են ամբարները, քշել տարել են անասունները եւ թալանված է տան բոլոր հարուստ սարք ու կարգը եւ գրադարանը։ Կալուածատէր Դուխանվսկօյի Օսինով կալուածքում գիւղացիները, թալանելով բոլոր չարժական կայքերը, քանդեցին տան գերանները եւ տարան իրանց հետ։ Ապրիլի մէկի իրիկնադէմին կողոպտողների խումբը մօտենում էր Վալկի քաղաքին. ապրիլի երկուսին այդ քաղաքի փողոցներում երեւացին գիւղացիների առաջապահ խմբերը, որոնք գնում էին կողոպտելու, բայց, նահանգապետը տեղ հասնելուց յետոյ ամսի երկուսի երեկոյեան կարգը վերահաստատվեց եւ անկարգութիւններ անողները պատժվեցան։ Սրանով վերջացան անկարգութիւնները Վալկի գաւառում. ընդամենը այդ գաւառում կողոպտուած են 25 կալուածատիրական կալուածքներ. մօտաւորապէս այնքան կողոպուտներ էլ զօրքի միջոցով չեն թոյլ տուել, որ կատարուեն։ Բացի դրանից, Վալկիի գաւառի սահմանակից Բօգօդուխօվի գաւառում կողոպտուած են երկու կալուածքներ, որոնք գտնուում են Բեազկօվկա գիւղի եւ Բլագօդատնի ագարակի մօտ, իսկ Միրնիյ ագարակը ենթարկվեց յարձակման, բայց ժամանակին ազատուեց։ Խարկօվի նահանգապետի եռանդուն գործունէութիւնը եւ նրա յայտարարելը ժողովրդին, թէ թալանած իրերը յօժարակամ վերադարձնողների վիճակը կը թեթեւացնուի, հարկադրեցին կողոպուտների մէջ մասնակցող գիւղացիներին խելքի գալ եւ անկարգութիւնների դադարելուն հետեւած օրերում գիւղացիները սկսեցին ներկայացնել չինական կառավարութիւններին, վնասուածներին վերադարձնելու համար, կողոպտած գոյքը եւ զղջման թղթեր տուին կազմելով հաւախօսականներ։ Հէնց որ կողոպուտները սկսուեցին Պօլտավայի, ինչպէս նաեւ Խարկօվի նահանգներում, իսկոյն անկարգութիւնների տեղը հասան դատաստանական իշխանութեան ներկայացուցիչները եւ սկսեցին

նախնական քննութիւններ կատարել։ Մի եւ նոյն ժամանակ սկսուեցին քննութիւններ ժանդարմների օֆիցէրների ձեռքով եւ այդ քննութիւններով պարզուել է, որ Պօլտաւայի եւ Կօստանտինօգրադի գաւառների սահմանակից մասերում, ուր գիւղացիների տնտեսական դրութիւնը, որոնք վերջին տարիները մի քանի անգամ անբերրիութեան զոհ դարձան, կատարելապէս գոհացուցիչ չէ,—բուն դրեց իր համար հակակառավարչական բրօշիւրների եւ հրատարակութիւնների պրօպագանդան մօլօրօսիական լեզուով։ Այդ հրատարակութիւնների մէջ գիւղական աղգաբնակութիւնը հրաւիրւում էր ապստամբուել իշխանութիւնների դէմ եւ իրանց ձեռքը գցել կալուածատէրերի գոյքերը։ Վերոյիշեալի վրայ անհրաժեշտ է աւելացնել, որ ճիշդ չեն հասարակութեան մէջ տարածված այն լուրերը, որ իբր թէ կան անձինք, որոնց վրայ գիւղացիները բռնութիւններ են կատարել, նոյնպէս թէ եղել են գիւղացիներ, որոնց բանտարկել են իշխանութիւնները։ Վերջին տեսակ լուրերի տարածման առիթ տուել է ակներեւ այն հանգամանքը, որ կողոպտուածները դադարեցնելու համար իշխանութիւնները ստիպուած էին մարմնական պատժի ենթարկել ապստամբութեան պարագլուխներին եւ նրա աւելի յամառ մասնակիցներին։ Այդ պատիժները, պատշաճաւոր ներգործութիւն անելով գիւղացիների վրայ, վերացրեց աւելի խիստ միջոցներ ձեռք առնելու անհրաժեշտութիւնը, նման այն միջոցների, որոնց ստիպված եղան դիմել Կօվալէվկա գիւղում։ Անկարգութիւնները ճնշելու ժամանակ կողոպտիչների առանձին խմբերին ղեկավարող անձինք եւ վերջինների չրջանից ամենից աւելի յանցաւորները բռնվեցին։ Նոյնպէս կալանաւորված են եւ մի քանի անձինք գիւղացիների միջեւ յանցաւոր պրօպագանդային մասնակցողների թւից։ Ներկայումս հասարակական հանգստութիւնը Պօլտաւայի եւ Խարկօվի նահանգներում վերականգնված է։ Պէտք է կարծել, որ այդ տեղերում ոստիկանական պաշտպան ոյժերի զօրեղացնելու ձեռք առած միջոցները կ'ապահովեն այնտեղ կարգի պահպանումը այսուհետեւ եւս։